# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«27» փետրվարի 2018 թվականի N 38

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Աշոտ Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 20-ին կայացած թիվ 3 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

27.02.2018թ. գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» փետրվարի 2018թվականի N 7

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 20-ի թիվ3 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Ջիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20.02.2018թ.
գյուղ Հացիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկ
համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 20-ի
թիվ7 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2018 թվականի թիվ3 արտահերթ նիստի

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Դրամական օգնություն տրամադրելու մասին:
4. Համայնքի և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների աճուդ-վաճառքով օտարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» փետրվարի 2018 թվականի N 8-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,«Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

**Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը 12408.3 հազար դրամ,որից**
վարչական բյուջեի ազատ մնացորդը՝ 11860.3 հազար դրամ, որը ենթակա է ուղղման համայնքի ֆոնդային բյուջե,
ֆոնդային բյուջեի ազատ մանացորդը՝ 548,0 հազար դրամ:

**Բյուջեի եկամտային մասում՝**
Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) ՝ տող 1257, ավելացնել 1166.9 հազար դրամով, տեղական վճարներ՝ տող 1351, ավելացնել 400.0 հազար դրամ, որպես աղբահանության վճար:

**Բյուջեի ծախսային մասում** կատարել հետևյալ փոփոխությունները՝
վարչական մասում՝
05 բաժին 1 խումբ 1 դասի 4213 հոդվածը ավելացնել 600.0 հազար դրամով՝ սահմանելով 1100.0 հազար դրամ
09 բաժին 5 խումբ 1 դասում ավելացնել 4637 հոդվածը 1166.9 հազար դրամով, 4511 հոդվածը պակասեցնել 200.0 հազար դրամով՝ սահմանելով 620.0 հազար դրամ::
ֆոնդային մասում՝
01 բաժին 6 խումբ 1 դասում ավելացնել 5113 հոդվածը 8258,3 հազար դրամով, 5121 հոդվածը 4000.0հազար դրամով, 5134 հոդվածը 150.0հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արզամ
2. Արշակյան Համլետ

3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Զիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20.02.2018թ.
գյուղ Հացիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«20» փետրվարի 2018 թվականի N 9

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և համայնքի բնակիչների դիմումները՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչներ.
   - Երևանի «ԱԶՊԱԹ-Վետերան» դատական փորձագիտության և հոգեբանության ինտիտուտի ուսանողուհի Հայկանուշ Սիմոնի Մնացականյանին,
   - ՀՀ ԿԳՆ ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի ուսանող Վահան Կիրակոսի Մաթևոսյանին,
   - ՀՀ ԿԳՆ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող Արտավազդ Համլետի Ավոյանին՝

   տրամադրել դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին 100 000-ական դրամի չափով՝ ուսման վարձը մասնակի վճարելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

չի մասնակցում քվեարկ.

1. Ավոյան Արզամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Զիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20.02.2018թ.
գյուղ Հացիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«20» փետրվարի 2018 թվականի N 10-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 23-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողատարածքներն օտարել աճուրդային եղանակով՝

- Գյուղատեսական նշանակության այլ հողատեսք 0.6816հա վարելահող ծածկագիր 0215-006, մեկնարկային գին սահմանել 1600 000 ՀՀ դրամ:
- Գյուղատեսական նշանակության այլ հողատեսք 0.0234հա վարելահող ծածկագիր 0006-0027, մեկնարկային գին սահմանել 20 000 ՀՀ դրամ:
- Գյուղատեսական արտադրական նշանակության հողատեսք 0.2650հա վարելահող ծածկագիր 0041-006, մեկնարկային գին սահմանել 300 000 ՀՀ դրամ:
- Բնակավայրի հասարակական կառուցապատման 0.016հա ծածկագիր 0017-0042 մեկնարկային գին սահմանել 50 000ՀՀ դրամ
- Բնակավայրի հասարակական կառուցապատման 0.19հա ծածկագիր 0045-0009 մեկնարկային գին սահմանել 220 000ՀՀ դրամ:

2. Թույլատրել՝ օտարել աճուրդային եղանակով, պետական սեփականություն հանդիսացող գյուղատեսական նշանակության այլ հողատեսքի 0.989հա վարելահողը՝ ծածկագիր 0114-0017, մեկնարկային գին սահմանել 60 000 ՀՀ դրամ:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով ընթացք տալ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (7)    Դեմ՝ (0)    Ձեռնպահ՝(0)

1. Ավոյան Արգամ
2. Արշակյան Համլետ
3. Թովմասյան Ռոբերտ
4. Իսկանդարյան Ջիվան
5. Կարապետյան Սերգո
6. Մարտիրոսյան Պերճ
7. Սարգսյան Ստեփան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

20.02.2018թ.
գյուղ Հացիկ